ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Երևան-0010, Հանրապետության հր. Կառավարական տուն 3

"11" հոկտեմբերի 2025թ. N 2427-Ա

ՀՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ ՕԴԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՄԻՋՈՑՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԵԼՔԻ ՀԱՄԱՐ ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՎՃԱՐՈՒՄԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական տուրքի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «զ» կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1936-Ն որոշման հավելվածով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 659-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 19-րդ կետի 20-րդ ենթակետով, հիմք ընդունելով «ՎԻԶԶ ԷԻՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության սեպտեմբերի 30-ի գրությունը և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության համապատասխան ոլորտը համակարգող նախարարի տեղակալի 2025 թվականի հոկտեմբերի 8-ի միջնորդությունը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետությունից օդային տրանսպորտի միջոցով ֆիզիկական անձանց ելքի համար պետական տուրքի վճարումից ազատել հետևյալ ուղղություններով.

1) «ՎԻԶԶ ԷԻՐ ՀՈՒՆԳԱՐԻ» ՍՊ ընկերությանը՝

ա. Երևան-Պրահա-Երևան(PRG) 03.10.2025թ.-ից 36 ամսով,

բ. Երևան-Համբուրգ-Երևան(HAM) 01.11.2025թ.-ից 36 ամսով,

գ. Երևան-Մեմինգեն-Երևան(FMM) 28.10.2025թ.-ից 36 ամսով,

դ. Երևան-Բարի-Երևան(BRI) 26.10.2025թ.-ից 36 ամսով,

ե. Երևան-Բուխարեստ-Երևան(OTP) 26.10.2025թ.-ից 36 ամսով,

զ. Երևան- Բովե-Տիլլե-Երևան(BVA) 02.10.2025թ.-ից 36 ամսով,

2) «ՎԻԶԶ ԷԻՐ ՄԱԼԹԱ» ՍՊ ընկերությանը՝

ա. Երևան-Նեապոլ-Երևան(NAP) 03.10.2025թ.-ից 36 ամսով:

2. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի մամուլի քարտուղարին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանի տեղադրումը ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կայքում:
3. Օդային տրանսպորտի քաղաքականության և թռիչքների թույլտվությունների վարչության պետի պարտականությունները կատարողին՝ ապահովել սահմանված կարգով հրամանի օրինակի տրամադրումն Ընկերությանը և Քաղաքացիական ավիացիայի կոմիտեին ստորագրման օրվանից 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում:

11.10.2025

X

ԱՐՄԵՆ ՍԻՄՈՆՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐ՝ Подписано: SIMONYAN ARMEN 4003890647 / Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ

ք. Երևան